



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՎԵՐԱՄՈՒՏԻ ԱՌԻԹՈՎ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆՑ
 ԸՆԹԱՑՔԻՆ

**ԱՇԱԿԵՐՏԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵ ԾԻՇԴ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, ՄԱՍՆԱԿԻՑ
 ԸԼԼԱՅ ՀԱՄԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ՀԱՄԱՏԱՐԻՄ՝ ՀԱՅ
 ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆՑ**

ԿԸ ՅՈՐԴՈՐԷ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ

Հայ աշակերտները պարտին իրենց կեանքերուն ընթացքին կատարել ճիշդ ընտրություններ, նախանձախնդիր ըլլան մեր ազգային ու հաւաքական կեանքին մասնակից ըլլալու, բայց մանաւանդ պէտք է հաւատարիմ մնան հայ դպրոցին ճամբով իրենց փոխանցուած մեր եկեղեցական, ազգային ու մարդկային արժէքներուն ու ասանդներուն, յայտնեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Երեքշաբթի, 2 Հոկտեմբերին, Ազգ. Ալեք Փիլիպոս Երկրդ. Վարժարան իր այցելութեան ընթացքին:

Համաձայն տարիներու ասանդութեան, Առաջնորդ Սրբազանը այս այցելութեամբ բացումը կը կատարէր վերամուտի առիթով Ազգային վարժարաններ իր այցելութիւններու շարքին, որ յաջորդ օրերուն ընդգրկեց Ազգ. Թաւլեան, Մեսրոպեան, Շամլեան, ու Թիւֆէնքեան վարժարաններն ու մանկամտուրները:

Ա. Փիլիպոս վարժարանին մէջ, Առաջնորդ Սրբազանը դիմաւորուեցաւ տնօրէնութեան կողմէ: Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազնիկեան, Արժ. Տ. Վիգէն Ա. Քինյ. Վասիլեան եւ Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան: Առաջին հերթին, ան այցելեց մանկապարտեզի բաժինը, ապա ուղղուեցաւ գրադարան, ուր վարժարանին 11րդ եւ 12րդ դասարաններու աշակերտները պատրաստած էին գեղարուեստական յատուկ յայտագիր մը:

Վերամուտի առիթով, տնօրէնութեան, անձնակազմին, դաստիարակներուն, աշակերտներուն ու ծնողներուն իր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները փոխանցելէ ետք, Առաջնորդ Սրբազանը յատուկ պատգամ մը ուղղեց աշակերտներուն: Ան նկատել տուաւ, որ մարդ արարածը իր կեանքի ընթացքին հանգրուանաբար դէմ յանդիման կու գայ ճիւղաւորուող ճամբաներու եւ ինքզինք կը գտնէ ճիշդ ընտրութիւն կատարելու հրամայականին դիմաց: Հայ դպրոցն ու հայ դաստիարակը մեր աշակերտութեան համար ունին ճիշդ ուղղութիւններ ցոյց տուողի

առաքելութիւն, սակայն ճիշդ ընտրութիւնը կատարելը պէտք է անհատին պարտականութիւնը ըլլայ նաեւ դպրոցական կեանքի տարիներէն անդին, մանաւանդ, որ նա՛ն չարիքներով լեցուն աշխարհի մէջ, տարբեր ու վտանգաւոր ազդեցութիւններ կրնան մոլորութեան տանիլ անհատը:

Շարունակելով իր խօսքը, Առաջնորդ Սրբազանը աշակերտներուն թելադրեց նաեւ հետամուտ ըլլալ մասնակցելու հայութեան կեանքին, որովհետեւ մեր հաւաքական կեանքը պէտք է միշտ կենսաւորուի երիտասարդներու ներդրումներով, փորձառութեանց իւրացումով ու բաժնեկցութեամբ: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը յորդորեց մնալ հաւատարիմ հոգեկան, մշակութային ու ազգային այն արժէքներուն, որոնք աշակերտներուն կը փոխանցուին հայ ընտանիքին ու վարժարանին յարկին տակ, աւանդներ՝ որոնք մաս կը կազմեն անոնց միտքի ու հոգիի աշխարհներուն ու գիրենք պիտի հարստացնեն կեանքի բոլոր օրերուն: Այս մօտեցումով ալ, ան գնահատանքով արտայայտուեցաւ աշակերտներու պատրաստած յայտագիրին մասին, զայն նկատելով այս հաւատարմութեան պերճախօս արտայայտութիւնը:

Առաջնորդ Սրբազանին այցելութիւնները պիտի շարունակուին յառաջիկայ օրերուն:

DURING THE PRELATE'S VISIT TO PRELACY SCHOOLS

STUDENTS MUST MAKE THE RIGHT CHOICES, PARTICIPATE IN OUR COLLECTIVE LIVES, AND REMAIN FAITHFUL TO OUR HERITAGE

At the start of each academic year, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, visits all our Prelacy schools to meet with and convey his message for the new school year to the administrators and students.

On Tuesday, October 2nd, the Prelate visited Rose and Alex Pilibos High School where he was welcomed by the administration. He was accompanied by Very Rev. Fr. Muron Aznikian, Archpriest Rev. Viken Vassilian, and Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian. Following a visit to the Kindergarten, the Prelate headed to the library where the 11th and 12th grade students had prepared a special program on this occasion.

The Prelate conveyed his blessings and best wishes for a successful school year to the administration, teachers, students, and parents, after which he delivered his message to the students. The Prelate pointed out that many times in our lives we find ourselves in a dilemma and struggle to make the right decision. The Armenian school has the task of steering our students in the right direction. However, it is still the responsibility of each individual to make the right decision for himself, something that can be especially difficult once they encounter the countless negative influences found in the outside world today. The Prelate then encouraged the students to participate in community life and to bring their valuable contributions to our collective lives. In

conclusion, the Prelate urged the students to remain faithful to our spiritual, cultural, and national values which are taught to them and instilled in them during their school years. He commended the program the students had prepared pointing out that it was a beautiful expression of this faithfulness to our heritage.

Besides Pilibos, thus far the Prelate has visited Tavlian, Mesrobian, Chamlian, and Tufenkian schools, with visits to other schools taking place in the coming days.